3/10 final

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Ուսանողի և Հայաստանի Հանրապետության Բարձրագույն Կրթության և Գիտության Նախարարության միջև

«_____»«_____»1995թ. ք. Երևան

Համաձայն նախարար Վ. Գնունու 1995 թ.-ի մարտի 1-ի թիվ 10 -Մ հրամանի, սույն պայմանագիրը (երկու բնօրինակից) կնքվում է, Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանող _____ -ի
անուն, ազգանուն, հայրանուն

(հետագայում՝ ԾՐԶԱՆԱՎԱՐՏ), որը բնակվում է _____
_____ , անձնագիր հմ. _____
հասցեն

և Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության և գիտության նախարարության _____ (հետագայում՝ «ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ») ՝ ի դեմս _____,
անուն, հայրանուն, ազգանուն

հասցեն՝ Երևան , Խորենացու պողոտա 13:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (հետագայում՝«ՀԱՀ») շրջանավարտներին Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ընդգրկելու նպատակով և հաշվի առնելով, որ ուսումնառության ծախսերը արվել են ի նպաստ Հայաստանի Հանրապետության, կողմերը համաձայնվում են հետևյալ պայմաններին.

1. Եռամյա կեցության մասին պահանջները

1.1 ԾՐԶԱՆԱՎԱՐՏը պարտավորվում է Հայստանի ամերիկյան համալսարանը ավարտելուց հետո առնվազն երեք տարի բնակվել Հայաստանի Հանրապետությունում:

1.2 Եթե ԾՐԶԱՆԱՎԱՐՏը որպես ուսանող գրանցվել է ՀԱՀ-ում, սակայն կոչում չի ստացել, պարտավորվում է համալսարանում ուսանելու յուրաքանչյուր սեմեստրի համար աշխատել Հայաստանի Հանրապետությունում՝ ոչ պակաս քան 6 ամիս, / կամ ՀԱՀ -ում գրանցված լինելու ժամանակաշրջանի համամասնությամբ:/

1.3 Կեցության եռամյա ժամկետի պահանջը սկսվում է կոչում ստանալու ծրագիրը ավարտելու վերջին օրը:

1.4 Ճանապարհորդության, գործարար նպատակներով և ծայրահեղ անհրաժեշտության պատճառով Հայաստանի Հանրապետությունից կարճաժամկետ բացակայելը չի արգելվում սույն պայմանագրով:

2. <u>ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ փոխհատուցումը</u>

2.1 Եթե ՇՐՋԱՆԱՎԱՐՏը հրաժարվում է աշխատել կամ բնակվել Հայաստանի Հանրապետությունում, ապա նա պետք է հատուցի ուսումնառության երկու տարիների ընթացքում ՀԱՀ-ի կողմից ՇՐՋԱՆԱՎԱՐՏի օգտին կատարված ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ (1993-1994թթ. այն կազմել է 12000 դոլլար):

2.2 Եթե ՇՐՋԱՆԱՎԱ ՐՏը գրանցվել է ՀԱՀ-ում, սակայն կոչում չի ստացել, ապա նա պետք է վճարի կատարված ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ, որոնք որոշվում են հաճախած սեմեստրների թվով:

2.3 Եթե ՇՐՋԱՆԱՎԱՐՏը մեկնում է Հայաստանի Հանրապետությունից ավելի շուտ, քան երեք տարին, ապա նա պետք է փոխհատուցում կատարի՝ եռամյա կեցության պահանջը լրացնելու համար պակասող ժամկետին համապատասխան չափով: Նման դեպքում ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ որոշվում են բացակայության ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարվա համար կատարված ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐի 1/3-ի հաշվով:

2.4 ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ որոշվում են դոլլարային արժեքից ելնելով, սակայն վճարվում են դրամային համարժեքով՝ համաձայն եռամյա ժամկետը սկսվելու օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի փոխանակման կուրսի:

3. <u>Փոխհատուցման պայմանները</u>

ՇՐՋԱՆԱՎԱՐՏի ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐի փոխհատուցման պայմանները պետք է առանձին կարգավորվեն նախարարի 1995թ. մարտի 1-ի Հմ. 10-Մ հրամանով ստեղծված հանձնաժողովի (հետագայում՝ «ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ») հետ՝ Հայաստանի Հանրապետությունից ՇՐՋԱՆԱՎԱՐՏի մեկնելուց երկու ամիս առաջ:

4. Բացառություններ

4.1 Այն ԾՐԱՆԱՎԱՐՏՆԵՐի համար, որոնք զինակոչվում են, զինծառայության ժամանակաշրջանը մտնում է կեցության եռամյա ժամկետի մեջ:

4.2 Առաջին, երկրորդ կարգի հաշմանդամները, հղի և երեքից ցածր տարիքի երեխաներ ունեցող կանայք, որոնք Հայաստանի Հանրապետությունից չեն հեռանում, ազատված են սույն պայմանագրի պահանջներից: Այնուհանդերձ, այս կետով ազատման համար պետք է առանձին դիմել և իրավունք ստանալ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ կողմից:

4.3 Այն ԾՐԱՆԱՎԱՐՏՆԵՐը, որոնք ՀԱՀ-ի հանձնաժողովի կողմից ուղարկվում են արտասահման՝ Գիտությունների դոկտորի ծրագրին մասնակցելու համար, պետք է Հայաստանի Հանրապետությունում եռամյա կեցության ժամկետը լրացնեն իրենց վերադարձից հետո, հակառակ դեպքում նրանք ենթակա կլինեն ծախսերի փոխհատուցման պահանջներին՝ ներառյալ դոկտորանտուրայում ուսուցման ընթացքում կատարված ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ:

5. Վեճեր և բողոքարկումներ

5.1 Համաձայնագրից բխող տարաձայնությունների դեպքում առաջինը պետք է դիմել նախարարության արտաքին կապերի վարչությանը, որը սույն հայցը կարող է փոխանցել նախարարի հրամանով ստեղծված ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ:

5.2 Արտակարգ հանգամանքների դեպքում ԾՐԱՆԱՎԱՐՏը կարող է բողոքարկել ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ:

6. Դատական հայցեր և հարկադրանք

6.1 ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ չվճարելու կամ սույն Պայմանագրի պահանջների խախտման դեպքում ՀԱՀ-ը լիազորում է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ դատական գործ հարուցել և պաշտպանել ՀԱՀ-ի շահերը Հայաստանի Հանրապետության դատարաններում և ստանալ բավարարում:

6.2 Սույն պայմանագիրը խախտելու դեպքում ԾՐԱՆԱՎԱՐՏը պարտավոր է վճարել պայմանագիրն իրագործելու հետ կապված բոլոր ծախսերը:

7. Եթե ինչ որ պատճառով սույն պայմանագրի որևէ կետ դառնում է անգործուն, մնացած կետերը մնում են ուժի մեջ:

Ուշադիր կարդացեք. Դուք հաստատում եք օրինական պարտավորեցնող մի պայմանագիր, որը Ձեզնից պահանջում է ՀԱՀ-ը ավարտելուց հետո երեք տարի աշխատել Հայաստանի Հանրապետությունում կամ փոխհատուցել ուսումնառության ծախսերը:

Ես հայտարարում եմ, որ եթե մեկնեմ Հայաստանի Հանրապետությունից, մեկնելուց երկու ամիս առաջ տեղյակ կպահեմ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆը: Այնուհետև, ես հասկանում եմ, որ ՀԱՀ-ը ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետությունում երեք տարի աշխատելու իմ պարտավորությունը չկատարելու դեպքում, ես պետք է փոխհատուցեմ ՀԱՀ-ում իմ ուսանելու համար կատարված ՈՒՍՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ, որի համար ստորագրում եմ:
Պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

Ստորագրված է ---------- /օրը/ մարտի, 1995թ.

ԾՐԶԱՆԱՎԱՐՏ	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ստորագրություն	Ստորագրություն

07.03.95թ.